

крестьянская **խորհուրդ**
ԴՅՅԵՄՈՎ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՈՒՆՏԵՆՏԱՅԻՆ ՑԵՎ ԲՐԻԳԱԴԱՑԻՆ
ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ
ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Մ Ե Թ Ո Դ Ա Կ Ա Ն Ն Ա Մ Ա Կ

ՇՐՋԱՆԱՑԻՆ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐՆ

ԿԱԶՄԵՑ՝ Բ. Մ. ԼԵՅՐԶՈՆ

07

L-33

Հ Կ (բ) Կ Կեմեկովի հրատարակչություն
«Խորհրդային Հայաստան»

Յ Ե Ր Ե Վ Կ Ո Ց

1 9 3 3

23 JUN 2009

20

Հետագա բոլոր կոնսուլտացիաները պետք է սկսել ստուգումով, թե հեռակայողներն ինչպես են յուրացրել դասախոսության նյութը, իսկ վերջում, մի 20—30 րոպեյի ընթացքում համառոտակի պիտի պատմեն հետևյալ առաջադրանքի մասին:

Այս ուսումնական տարում ուսուցչման ժամկետը յերկարացվում է և ծրագիրը բաժանված ընդարձակվում: Ծրագիրն այժմ կազմված է այն հաշվով, վոր պարապմունքը 1936 թվի նոյեմբերից տեղի մինչև 1937 թվի դեկտեմբերը:

Փոփոխվում է նաև դասախոսությունների հետևողականությունը: Ընդհանուր հարցերին նվիրված դասախոսությունները պետք է հաջորդեն խոշոր գործնական աշխատանք պահանջող դասախոսություններին, վորպեսզի հեռակայողները թերթի աշխատանքի վորոշ պրակտիկ փորձ ձեռք բերեն: Այնպիսի դասախոսությունները, ինչպիսիք են՝ «Թղթակցության ուղղումը», «Թերթի տեխնիկական ձևավորումը», «Ինչպես գրել թղթակցությունը» և այլն, անցյալ տարի զգված էյին դասընթացների վերջը, մինչդեռ այս հարցերին նվիրված պարապմունքներն անհետաձգելիորեն հարկավոր են հեռակայողներին: Իրա համար ել այս տարի հետևյալ դասախոսություն-առաջադրանքներն են ուղարկվելու՝ ստորև նշված հաջորդականությամբ:



60218.67

1-ին առաջադրություն

ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼ ՎՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՆԲ

Դասախոսությունը հեռակայողներին կծանոթացնի, թե ինչ են ասել Լենինն ու Ստալինը բոլշևիկյան մամուլի մասին. նրա կուսակցականության մասին, այն մասին, թե թերթն ինչպիսի կոլեկտիվ պրոպագանդիստ, ագիտատոր ու կազմակերպիչ է, այն խնդիրներին մասին, վոր դրված են մամուլի առաջ սոցիալիստական շինարարության ներկա շրջանում:

2-րդ առաջադրություն

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԲԸ

Դասախոսությունը նշում է պաշտպանության այն աշխատանքները, վորոնց համար ամենորոյա պայքար պիտի մղի պատի թերթը և պատմում է լավագույն պատի թերթերի փորձը: Դասախոսությունը կողնի պատի թերթում ճշտորեն լուսարանելու կոլեկտիվության պաշտպանության աշխատանքի հարցերը:

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՆՈՐ ՈԱՆՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ՊԱՏԻ ԹԵՐԹԸ**

Դասախոսությունը կատարմի խորհուրդների Համաժողովին նախաձեռնած 8-րդ արտակարգ համաժողովարի արգյունքների մասին: Նա հեռակայողներին կողմի ուսումնասիրելու ստալինյան Սահմանադրությունը և ընկեր Ստալինի զեկուցումը: Դասախոսությունը կոնկրետ որինակներով ցույց կտա, թե պատի թերթն ունրա խմբագիրն ինչպես պիտի աշխատեն նոր Սահմանադրության պայմաններում:

**ԿՈՆՏՆՏԵՍՏԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԽՆԳԻՐՆԵՐՆ ՈՒ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Դասախոսությունը վերլուծման կենթարկի մի քանի պատի թերթ՝ «Ընդհանուր» բնույթ կրող ընդարձակ հոգվածներով: Վորոնք պայծառորեն չեն արտացոլում կոլտնտեսության կյանքը, չեն կարողանում կազմակերպել իրենց ընթերցողներին, ապա հեռակայողներին մանրամասն կրացատրի, թե ինչ հարցերով և ինչպես պիտի զրազդի կոլտնտեսային պատի թերթը:

Այդ դասախոսության մեջ կխոսվի կուսակցական թեմաներին վերաբերող նյութի կազմակերպման մաս-

սին, օտախանովյան շարժման հարցերի լուսաբանման մասին, կոլտնտեսային կենցաղի ու կուլտուրայի, և վերջապես պատի թերթում ինֆորմացիա տալու հարցերի մասին:

Դասախոսությունը հեռակայողներին հետաքրքիր թեմաներ կնշի պատի թերթի աշխատանքի պլանի մեջ մտցնելու համար:

**ՊԱՏԻ ԹԵՐԹՆ ՈՒ ԿՈՆՏՆՏԵՍՏԻՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ
ՑՈՒՑԱՀԱՆԳԵՍԻՆ**

Այս դասախոսությունը կատարմի Համաժողովին նախաձեռնած գյուղատնտեսական ցուցահանդեսի նշանակության ու խնդիրների մասին, վոր զուգադիպելու յի խորհրդային իշխանության հաղթանակի 20-ամյակին: Ցուցահանդեսին եքսպոնատներ ներկայացնելու թեկնածու առաջավոր կոլտնտեսությունների որինապով ցույց կտրվի ցուցահանդեսի նշանակությունը: Վորպես սոցիալիստական գյուղատնտեսության վիթխարի հաղթանակների ստուգատես: Այդ դասախոսության մեջ կպատմվի, թե պատի թերթն ինչպես պետք է աշխատի, վորպեսզի կոլտնտեսությանն ոգնի՝ առանակցել Համաժողովին նախաձեռնած ցուցահանդեսին:

ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԹՂԹԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

Այս դասախոսութիւնը կ'աւանջի մի քանի լայն ախապատրաստված կոնսուլտացիա, վերոնց ընթացքում պետք է վերլուծվեն հեռակայոցների գրած թղթակցութիւնները:

Դասախոսութիւնը կ'աւտմի թղթակցութիւնների զանազան տիպերի մասին (մերկացնող, ինֆորմացիոն, փորձի հաղորդում, յերդիծական), կ'աւտմի, թե ինչպէս ընտրել թղթակցութիւնն նշուել, ինչպէս նշուելի հաւաքել թղթակցութիւնն համար և ստուգել այդ նշուելը, ինչպէս կ'աւտել թղթակցութիւնն պաւնը:

Դասախոսութիւնը մանրամասն կ'աւտմի նաեւ այն պահանջների մասին, վեր ստաջարվում են յուրաքանչյուր թղթակցութիւնը (կոնկրետութիւն, ճշգրտութիւն, նպատակաճգտում, քաղաքական ուղղութիւն և այլն) և հատուկ ցուցումներ կ'աւ թղթակցութիւնն լեզվի մասին:

Յ-րդ առաքարգրութիւն

ԽՄԲԱՈՒԼ ԴՆԵԽԱՏԱՆՔԸ

Այս դասախոսութիւնը հեռակայոյին պետք է ոգնի ճիշտ կաղմակերպել պատի թերթի խմբիկի աշխատանքը: Այն կ'աւտմի, թե ինչպէս կ'աւտուել խմբիկի ընտրութիւնը կ'աւտնտեսականների ժողովում,

ինչպէս պարտականութիւնները բաշխել խմբիկի անդամներին միջև, ինչպէս կ'աւտել պատի թերթի հերթական համարի պաւնը, ինչպէս աշխատանքի պաւն կ'աւտել և այլն:

Յ-րդ առաքարգրութիւն

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂԹՂԹԱԿՅՆԵՐԻ ՄԵՉ

Այս դասախոսութիւնն մեջ են մտնում հետեւյալ հիմնական գլուխները. Լենինն ու Ստալինը բանգլուղ-թղթակիցների մասին, կոնսակցական ղեկավարութիւնը բանգլուղ-թղթակիցներին, գլուղ-թղթակիցների շարքերի մաքրութիւնն համար, գլուղ-թղթակիցների պաշտպանութիւնը հաւածանքներից:

Յ-րդ առաքարգրութիւն

ԹՂԹԱԿՅՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄԸ

Այս դասախոսութիւնը թղթակցութիւնն ուղղմանը նվիրված՝ մի քանի գործնական պարապմունք կ'աւանջի: Դասախոսութիւնն մեջ խոսվում է այն մասին, թե ինչպէս պիտի ուղղել թղթակցութիւնը, վերպիտի չաղմակելն հեղինակի լեզուն ու միտքը: Այնտեղ խոսվում է ոտար և անհասկանալի բառերի մասին, կրճատումների, խոսքի, գրասենյակային ձևերի մասին, պիտանի բառերի ընտրութիւնն, նախադասութիւնն մեջ բառերի ճիշտ դասավորման, քաղվածքների ու թվերի ոգտագործման մասին:

Դասախոսութիւնը կ'աւտցված է լինելու կոնկրետ որինակներով:

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

Այս դասախոսութիւնը ցույց կտա, Վոր թեղ-
թակցութիւններէ գործունութիւնն անմիջականորեն
կախված է պատի թերթերի ոպերատիվութիւնից ու
հրատապութիւնից, նրանից, թե այդ թերթերը Վոր-
քան են կարողանում լրջորեն դնել կոլտնտեսական-
ներին հետաքրքրող ու հուզող հարցերը:

Մանրամասն կլուսաբանվի, թե թղթակցութիւն-
ների գործունութեան համար ինչ նշանակութիւն
ունի քննադատութեան ճիշտ տոնն ու վոճը, նրա
կոնկրետութիւնը, ճշմարտութիւնը, համոզիչ լի-
նելը:

Դասախոսութեան մեջ հանգամանորեն կքննվի
լավագոյն պատի թերթերի փորձը՝ գործունութեան
համար միշտ պայքարում (մշտական բաժին—«Թղթակ-
ցութիւնների հետքերով» վերնագրով, թղթակցու-
թիւնների քննարկում կոլտնտեսականների ժողով-
ներում և այլն):

Դասախոսութեան մեջ մի հատուկ բաժին էլ
նվիրվում է ղրական նյութերի գործունութեան հա-
մար միջոց պայքարի խնդիրներին (ստախանովական-
ների ու հարվածայինների փորձի հաղորդում, ռացիո-
նալացման առաջարկութիւնների կենսագործում և
այլն):

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Դասախոսութիւնը քննութեան է առնում պա-
տի թերթի ձեւավորման գործում յեղած ամենատա-
րածված թերութիւնները: Միաժամանակ ղրական
որինակներով ցույց է արվում, թե թերթում ինչպե-
ս պիտի դասավորել թղթակցութիւնները, ղրել վերնա-
գրերը, ոգտագործել թերթերից ու ժուռնալներից
կտրած նկարները և այլն:

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ծանոթանալով այդ դասախոսութեանը՝ հետակա-
յորը ղաղափար կկազմի պատի թերթի մասսայական
աշխատանքի ամենահետաքրքիր ձևերի մասին. ինչ-
պե-ս կազմակերպել «Ստախանովյան փորձի արիքուն»,
կամպանիա պատի թերթում, աշխատանքն ընթերցող-
ների մեջ (ընթերցողների ժողովներ, ղրույցներ, խըմը-
կույի ղոնրաց նիստեր), ինչպե-ս կազմել թերթի մա-
սայական աշխատանքի պլանը:

ՅԵՐԳԻԾԱՆԻՔԸ ԿՈՒՏՆՏԵՍԱԼՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹՈՒՄ

Այս դասախոսութիւնը խմբագրին ցույց կտա, թե ինչպիսի ուժեղ գէնը և յերգիծանքը և ինչպէս փայլուն կերպով ոգտագործում է յին այն Լենինն ու Ստալինը:

Դասախոսութիւնը խմբագիրներին կզգուշացնէ այն սխալներէից, վոր տարածված են պատի թերթերում (յերգիծանքի աղջատումը, խծրծանքները, բամբասանքները) և դրական որինակներ կրերի, թե ինչպէս պատի թերթերը հաշոյուրթյամբ ոգտագործում են այնպիսի ձևեր, ինչպիսիք են ծաղրանկարը (կաբիկատուրան), յերգիծական բանաստեղծութիւնը, յերգիծական թղթակցութիւնը, ֆելյետոնը և այլն:

ՄԱՄՈՒԼԻ ՈՐԸ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Այս դասախոսութիւնը նվիրված է լինելու պատի թերթերի խնդիրներին՝ գալիք մամուլի որվա տունակատարութեան կապակցութեամբ, վոր զուգադիպում է «Պրավդա»-յի քսանհինգամյակին: Վորպես ոգնութիւն պատի թերթերին ու կոլտնտեսային կազմակերպութիւններին՝ արվելու յն ինչպէս պատմական այնպէս ել գործնական նյութեր:

ՊԱՏԻ ԹԵՐԹԸ ՍԱՅԻՍԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ XX ՏԱՐԵՒԱԶԻՆ

Այս դասախոսութիւնն ուղարկվելու յի իր ժամանակին և հեռակայողին կոնկրետ ցուցումներ և տալու, թե ինչպէս նախապատրաստվել ու անցկացնել պատմական մեծ տարեգարձը:

* * *

Ուսուցման ժամանակամիջոցը միայն նրա համար չի յերկարացված, վոր մի քանի նոր դասախոսութիւն և ավելացված: Դիլիավոր պատճառն այդ չի: Շրջանային թերթը, վոր հեռակայողների համար կոնսուլտացիա յե կազմակերպում, պետք է այս ուսուցումը համարի վորպէս պատի քերքերի խմբագիրներին ամենհոգա ոպերասիվ գեկաժարութիւն ցույց տալու մի ձև: Կոնսուլտանտի խնդիրն ամենին ել չի սահմանափակվում միայն նրանով, վոր ստուգի, թե հեռակայողն ինչպէս և յուրացրել դասախոսութեան նյութը: Դիլիավորն այն է, վոր կարգավորվի կոլտնտեսութիւններում կանոնավորապէս մարտական ու հետաքրքիր պատի թերթեր լույս ընծայելու գործը, ոգնել հեռակայողներին՝ պատի թերթերի շուրջը գլուղթը թակիցների հաստատուն, ամուր ակտիվ համայնմբեր Սալոյն այս՝ պատասխանատու խնդիրն ամենից քիչ կարելի յե լուծել այնպէս կոչված՝ դասախոսու-

թյան «մշակումով»։ Անցյալ տարի մի քանի շրջանային թերթեր գործը հենց դրանով էլ տահմանափակում էին։ Որինակ, Լենինգրադի մարզի Դեմյանովյան շրջանի «Տրակտոր» թերթը հեռակայողներին հրավիրել է շրջանային կենտրոն՝ սեմինար պարապմունքի և «5 որում»,—ինչպես հաղորդում է խմբագրությունը, — հեռակայողները լիովին մշակել են ստացած վեց դասախոսությունը՝ պատի թերթերի աշխատանքի պրակտիկայի և գյուղատնտեսական բնթացիկ կամպանիաների մասին, յերբորդ առաջագրությունը՝ ուսաց լեզվի վերաբերյալ և բացի այդ գրել են ստուգիչ գրավոր աշխատանքներ»։

Այն, ինչ վոր պիտի անելին մի քանի ամսի ընթացքում, կատարել են 5 որում։ Ի հարկե, այսպիսի «ուսուցման» արդյունքները չնչին կլինեն։ Յեզ գարմանայի չե, վոր այդ շրջանում միայն 9 պատի թերթ կա, վոր ամիսը 3 անգամ լույս են տեսնում, մյուս պատի թերթերը կամ բոլորովին դադարել են, կամ շատ ուշ-ուշ են լույս տեսնում։

Մակերեսային ուսուցումը վոչ մի ընդհանուր բան չունի լրջորեն կադրեր աճեցնելու խնդրի հետ։ Այդպիսի ուսուցումը միմիայն խմբագրներին վարժեցնում է վնասակար սեզոնայնություն՝ պատի թերթերի աշխատանքներում, անցավ յետուն շրջանը և—վերջ, խմբագրերը հանգստացավ, պատի թերթն էլ դադարեց լույս տեսնել։ Իսկ յեթե կոնսուլտացիան տեղի ունենա սիստեմատիկորեն, ամբողջ տարվա ընթացքում տմեն տասնհինգորչակը մեկ անգամ, այդ

ժամանակ կոնսուլտացիայի դեկավարը լավ կուսումնասիրե մարդկանց և վոչ միայն հեռակայողներին վորոշ գիտելիքներ կտա, այլ և կհետևի, թե նրանք ինչպես են ոգտագործում իրենց սովորածը, կոգնի նրանց վերացնելու առաջացած դժվարությունները։

Կոնսուլտանտը պետք է կանոնավոր կերպով հետևի, թե հեռակայողներն ինչպես են լույս ընծայում պատի թերթերը և պետք է ընդդի, վոր անթույլատրելի բան է, յերբ հեռակայող խմբագրերը միայն հաճախում է կոնսուլտացիաներին, իսկ թերթը լույս չի ընծայում։

Փորձը ցույց է տալիս, վոր այն շրջաններում, ուր ուսուցումը սիստեմատիկ ընույթ է ունեցել, պատի թերթերի ցանցն ամրացել է։

Ահա, որինակ, Լենինգրադի մարզի Ուլուլովյան շրջանի «Կրասնիյ Զապոլիկ» կոլտնտեսությունում հեռակայող Ալեկսեյեվը Հոկտեմբերյան հեղափոխությունից ՏԼՄ տարեդարձին արդեն լույս է ընծայել իր պատի թերթի այդ տարվա յոթանասունհինգերորդ համարը։ 4-5 որը մի անգամ կանոնավոր կերպով լույս տեսնող այդպիսի պատի թերթը ամուր տրմատներ է գցել կոլտնտեսականների կենցաղի մեջ։

Այդպես ուրեմն. խնդիրն այն է, վոր յեկնելով դասախոսություն յյուլիսից՝ գրույցների ու կոնսուլտացիաների միջոցով, ինչպես և կազմակերպական ոգնություն միջոցով ստեղծել պատի քերքերի պատրաստված խմբագրման մեծահամ կադրեր և խմբողներին ամենաակտիվ անդամներ։

Այդպիսով ուսուցման ժամանակամիջոցի յերկարացումը մի միջոցառում է, վոր սկզբունքային խոշոր նշանակութիւն ունի: Ուսուցման յերկար ժամանակամիջոցը շրջանային թերթերին լայն հնարավորութիւններ և առկա ամբաստանողութիւնը:

Հարկավոր է լինելին ոգտագործել այդ հնարավորութիւնները:

Վերականգն հեռակա ուսուցումը հաջող լինի, հարկավոր է հենց սկզբից այն ընթանա հաստատուն սահմանված ծրագրով:

Ապա, անհրաժեշտ է իր ժամանակին հեռակայողներին բաժանել ստացված դասախոսութիւնները: Այդ պէտք է անել անմիջապէս, դասախոսութիւնն ատանալուն պէս, չթողնել, վոր այն մի քանի որ եր պահած միտ խմբագրատանը, պարապմունքները պէտք է սկսել ճիշտ վերջոված ժամին, պարապմունքներին համար պէտք է լավ շնք ապահովել և այլն:

Այն սենյակում, ուր կոնսուլտացիան է տեղի ունենալու, պէտք է անպայման կախել կորանստութիւնների պատի թերթերի վերջին համարները, ունենալ մամուլի հարցերին վերաբերող ժուռնալներ, զրքեր:

Ղեկավարը պէտք է հող տանի, վոր այդտեղ լինի զրատախոսակ, կազիճ, վոր ընդմիջումները ճիշտ հաշորդեն իրար:

Վժմանը այս ամենը «մանրուք» են համարում և հաճախակի թերազնահատում են: Մինչդեռ ուսուց-

ման հաստատուն դիպցիպլինան ու պարապմունքների ժամանակ կարգ ու կանոնը զգալի չափով կբարձրացնի հեռակա ուսուցման արդյունավետութիւնը:

ՈՒՎՈՐԵՑՆԵԼ ՅԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ

Հեռակա ուսուցման օրդյունքն այն պիտի լինի, վոր պատի թերթերի խմբագիրները հատուկ դիտելիքներ ու փորձ ձեռք բերեն: Սակայն կոնսուլտացիայի ղեկավարը վոչ մի բովե չպիտի մոռանա ընկեր Ստալինի այն խոսքերը, թե «բանվորական ու գյուղական բարակիցներն ժուռնալիստիկայի սխիւնկայի վորո՞ւ միմիում սովորեցնելը, ի կարկէ, անհրաժեշտ է: Սակայն հիմնականն այդ չի: Հիմնականն այն է, վոր բանվորական ու գյուղական բարակիցներն իրենց աշխատանքի ընթացքում սովորեն լեզ իրենց մեջ մտակեն ժուռնալիստ-խաւարտական, աշխատողի այն հասարկութեւնը, առանց վորի բարակիցը չի կարող կատարել իր միտքան լեզ վոր չի կարող պատասխել ուսուցման վորեւէ աշխատական միտքով, այդ բառի սխիւնկական իմաստով» («Ռարոչի կորեսպոնդենտ» ժուռնալի աշխատակցի հետ ընկեր Ստալինի ունեցած զրուցից, ապված է «Ռարոչի-կրեսպոնդենտի կորեսպոնդենտ» ժուռնալի 1924 թվի № 6-ում):

Պարապմունքները պէտք է խորապէս համակված լինեն կուսակցականութամբ: Կոնսուլտացիան պէտք է զարձանել պատի թերթերի խմբագիրներին լուրջ, բոլորակից դաստիարակութեան դպրոց: Դրա համար



ել յերբեք չի կարելի թույլ տալ, վոր ուսուցումը հանգի միմիայն հեռակա դասընթացների ծրագիրը ձեռկանորեն անցնելուն: Հարկավոր է շրջանի կուտակառությունների կյանքից վերցրած կոնկրետ որինալներով հեռակայողներին դաստիարակել բոլորէկյան սկզբունքայնութեան վողովներչնել նրանց անհաշուություն զեղի խորթ հայացքները, սրություն, զգայնություն: Հարկավոր է խմբագիրներին սովորեցնել, վոր նրանք կարողանան խորապես քննադատել թերությունները և կարողանան տեսնել մեր սքանչելի կյանքը, հարկավոր և սովորեցնել զրել լավի մասին, այն նորի մասին, վոր կա արտադրութեան մեջ, հասարակական կյանքում, կենցաղում, մերկացնել կուտակառութեան շինարարութեան թշնամիներին: Հարկավոր է խմբագրի մեջ սեր ստեղծել զեղի իր կոլտնտեսութեանը, կոլտնտեսային կարգը, սեր՝ զեպի սոցիալիստական հայրենիքը: Հարկավոր է հեռակայողների մեջ զարգացնել խոր պատասխանատվութեան գիտակցութեան՝ թերթի աշխատանքի նկատմամբ:

Այստեղ շատ մեծ է կոնսուլտանտի դերը: Նա պետք է հեռակայողին սովորեցնի, թե ինչպես պիտի գնահատել իրեն շրջապատող իրականութեան փատտերը, և այն ինչպես լուսարանել թերթում: Պետք է այնպես զարգացնել հեռակայողի ճաշակը, վոր նա տեսնի նոր թեմաները, նոր, հաճախ պատի թերթի համար դեռ անսովոր հարցերը, զբանով իսկ շարունակ բնագրծակել հեռակայողի մտահորիզոն ու հետաքրքրութեան դաշտը:

Նոր թեման, նոր հարցերը խմբագրի մեջ ցանկություն կառավարեն մորեն լուրջ հողլած կարգալու կենտրոնական թերթում, ժուռնալում, կամ կարգալու մորեն զեղարվետական յերկ: Յեւ կոնսուլտանտը պետք է կարողանա ժամանակին հանձնարարել նրան անհրաժեշտ գիրքը, պատմել նրա նշանակութեան, նրա բովանդակութեան մասին:

Տարեցատարի ավելի յի սրվում պատի թերթերի խմբագիրների կուլտուրական մեղարդակի բարձրացման խնդիրը: Դրա մասին հողալը պետք է զառնա կոնսուլտանտի առաջնակարգ պարտականութեանը:

Վերցնենք թերթերի ընթերցումը: Շատ կոնսուլտանտներ նույնիսկ չեն հետաքրքրվում, թե հեռակայողները կարդում են արդյոք գոնե շրջառային թերթը: Սակայն, հարց է ծողում, կոնսուլտանտն ինչ կարող է սովորեցնել հեռակայողին, յեթե նա լուսապես այնպես չի անում, վոր հեռակայողները թերթերդուրս զրեն ու կարողանան կարդալ այն: Պատի թերթի խմբագրին պետք է վարժեցնել, վոր նա կանոնավոր կերպով թերթ կարդա. չե՞ վոր թերթը նոր մտքերի, նոր թեմաների աղբյուր է հանդիսանում պատի թերթում նրա կատարած աշխատանքի համար: Թերթը կարդալով հեռակայողը կարող է մտածել, թե անա, այսինչ նյութն արժե կտրել ու տեղավորել պատի թերթում, կամ այսինչ զեպը, այսինչ վորոշման մասին արժե մի նյութ գրել պատի թերթում և այլն:

Ամեն մի պարագմունքի ժամանակ կարելի յի մի տաստասնինդ բողե գտնել և պատմել թերթե-

քի վերջին համարներում տպված այս կամ այն հետաքրքիր նյութի մասին: Կարելի չե վորհե հոգված, թղթակցություն բարձրաձայն կարդալ և հեռակայողներին առաջ հարց դնել, թե նրանք ինչպես կդատեն այդ նույն թեման պատի թերթում:

Հեռակայողներից շատերի համար կոնսուլտացիան նրա ուսման միակ ձևն է: Բոլոր խմբագիրներն էլ քաղխմբակների պարապմունքներին չեն հաճախում: Մինչևու պատի թերթի խմբագիրը պետք է ամեն ու տեղյակ լինի ընթացիկ քաղաքական հարցերին, այդ հարցերը պետք է պարզաբանել կոնսուլտացիայի ընթացքում: Լինում են այնպիսի քաղաքական հարցեր, վորոնց համար կարելի չե նույնիսկ հետաձգել ծրագրով նախատեսած վորհե թեմայի կոնսուլտացիան:

Ահա, որինակ, վերջերս ավարտեց խորհուրդների Համամիութենական 8-րդ արտակարգ համագումորը և կոնսուլտանտն անմիջապես պետք է հեռակայողներին ողնի ուսումնասիրել ընկեր Սաւլինի դեկուցումն ու ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը: Ճիշտ այդպես պիտի վարվել նաե կուսակցության ու կառավարության վորհե կարևոր վորոշման դեպքում, վորհե աչքի ընկնող դեպքի մասին տեղեկություն ստանալու դեպքում:

Վորպես կանոն յուրաքանչյուր կոնսուլտացիայի ժամանակ վորո ժամանակ պիտի հասկացնել բաղաձայն հարցերի շուրջ գրույց ունենալուն:

Կոնսուլտանտը հեռակայողներին մեջ սեր ու հետաքրքրություն պիտի առաջացնի դեպի գեղարվեստական գրականությունը: Ինչու, որինակ, կոնսուլտացիայից հետո մի քիչ չմնալ ու կարդալ Պուշկինի ստեղծագործություններից, խոսել նրա մահվան հարյուրամակի մասին, կամ մի ուրիշ անգամ խոսել Ոստրովսկու «Ինչպես եր կոխվում պողպատը» գրքի մասին, և այլն:

Այսպես ուրեմն, կոնսուլտանտի առաջ խոշոր ու պատասխանատու լինելի է գրված: Նա վոր միայն պատի թերթի աշխատանքի դաստոռ չե, այլ և պատի թերթերի խմբագիրների քաղաքական գեղավարն է ու դաստիարակը:

Շրջանային թերթերից շատերը, վորոնք անցյալ տարի պարապմունքներ են ունեցել, շատ լավ զգացել են կոնսուլտանտի դերի լրջությունը: Կարելի չե լավ կոմպլեկտավորել դասընթացը՝ պարապմունքների հաջողության համար ամեն ինչ տալ գլուղթղթակիցներին, բայց և այնպես ուսուցումից շատ բան չի ստացվի, յեթե կոնսուլտանտի ընտրությունն անհաշոգ է յեղի:

Եթե կոնսուլտանտը վատն է լինում, հաճախումների տոկոսն անմիջապես իջնում է, հեռակայողները հետաքրքրությամբ չեն լսում նրան:

Միանգամայն ընկան է, վոր հեռակա ուսուցման վորձ ունեցող թերթերն այս տարի արդեն հատուկ լրջությամբ պետք է մոտենան կոնսուլտանտի ընտրության խնդրին: Չի կարելի կոնսուլտացիան

վատահեղ թիչ պատրաստութիւնն ունեցող մարդու: Չէ՞ վոր վերջին հաշիւով կոնսուլտանտի պատրաստութիւնն ինչ են կախոված ուսուցման վորակն ու նրա արդիւնքները:

Սակայն կոնսուլտանտի հոգատար ընտրութիւնով միայն չի լուծվում այդ հարցը: Հեռակայողներին շնորհալի ու վորակյալ ղեկավարութիւնն ցույց տալու համար պահանջվում է վոչ միայն ընդհանուր պատրաստութիւնն, այլև վորոշ մեթոդական փորձ, թեմաների մեթոդական ձիշտ մշակում: Մենք խորհուրդ ենք տալիս խմբագրութիւններին, վորոնք թեկուզ յերկու կոնսուլտանտ ունեն, յուրաքանչյուր թեմային անցնելուց առաջ անպայման մեթոդական խորհրդակցութիւնն ունենալ: Թեկուզ է այդ մտքերի փոխանակութիւնն լինի, թե ինչպես անցավ նախորդ պարապմունքը և կոնսուլտանտներն ինչպես են մտածում անցկացնել հետևյալ պարապմունքը, այդպիսի խորհրդակցութիւնը մեծ ոգւտ կտա:

ՂԵՎԱԿԱՐԻ ՆԱԽԱՂԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՍՈՒԼՏԱՅԻԱՅԻՆ

Կոնսուլտացիային պետք է խնամքով նախապատրաստվել:

Վոչ մի ղեկավար չի կարելի այսպես դատել, թե՞ Դասախոսութիւնը կազմած է գլուղթղթակցի համար, իսկ յետ առանց այն ել լավ գիտեմ նյութը, դրա համար եր, քավական է, վոր մի թեթևակի աչքի

անցկացնեմ դասախոսութիւնը: Ղեկավարը պետք է ուշադրութեամբ կարդա իր ստացած ամեն մի դասախոսութիւնը և նշի, թե վորոնք են լինելու հանգուցային կետերը կոնսուլտացիայի ժամանակ:

Պարտադիր չէ, վոր դասախոսութիւնն ամբողջ նյութն ոգտագործվի զրույցի ժամանակ: Բազմաթի հարցերով ծանրաբեռնված կոնսուլտացիան դուրս կգա ճապաղ ու մակերեսային: Հարցերը պետք է ընտրել մտածված, հաշիւ առնելով տեղական պայմանները:

Յեթե, որինակ, շրջանում առանձնապես վատ է զբված ստախանովականների վորձի հաղորդումը պատի թերթերի միջոցով, ապա, բնականաբար, այդ հարցին ավելի մեծ ուշադրութիւն պիտի դարձնել, քան մյուսներին:

Նշանակում է, ղեկավարը լավ պիտի իմանա շրջանի պատի թերթերը, նրանց զրական ու բացասական կողմերը: Պարապմունքներին նախապատրաստվելիս կոնսուլտանտն իր ձեռքի տակ պիտի ունենա վոչ միայն դասախոսութիւնն ու մի շարք գրքեր, այլև հեռակայողների լույս ընծայած պատի թերթերը: Գործն այնպես պիտի դնել, վոր ունկնդիրները պատի թերթերի վերջին համարները բերեն վոչ թե կոնսուլտացիայի որը, այլ մի քանի որ առաջ այդ թերթերն ուղարկեն կոնսուլտանտին:

Կոնսուլտանտը պետք է նախորոք մտածի, թե ինչպես պիտի ձևակերպի այն հարցերը, վոր ինքը պիտի տա ունկնդիրներին: Իսկ այդ շատ կարեոր է: Հարկավոր է հարցերն այնպես տալ, վոր այդ հարցե-

ըր բարձրացնեն ունկնդիրները հետաքրքրությունն ու ակտիվությունը:

Միևնույն հարցը մի քանի կերպ կարելի յի ձև-վակերպել: Որինակ, կարելի յի հարցնել. «Ինչպիսին պիտի լինի գյուղթղթակիցը»: Սակայն այսպիսի ընդհանուր հարցը միայն ընդհանուր պատասխան կարող է ստանալ: Այդ նույն հարցը կարելի յի տալ ուրիշ ձևով: Որինակ, նշելով վորհե կոնկրետ փաստ, որի-նակ, այս կամ այն գյուղթղթակցի անթույլատրելի վարքը, կարելի յի հարցնել՝ արդյոք այդ վարքը հա-մապատասխան՞ւմ է գյուղթղթակցի պատվին ու ար-ժանապատվությանը, նրա հասարակական դերին ու դիրքին:

Յերկու հարցերի բովանդակությունն ել նույնն է, սակայն հարցի յերկրորդ ձևակերպումը խմբագրին կստիպի մտածել, հեռակայողի մեջ ցանկություն կա-ռաջացնի իր տեսածներից ել կոնկրետ որինակներ պատմել:

Հարցերը նախապատրաստելուց հետո պետք է նշել, թե վեր հեռակայողներին պիտի հանձնարարվի պարապմունքի ժամանակ յեղույթ ունենալ և հաղոր-դել իր աշխատանքի փորձը: Այդպիսի հաղորդումների համար պիտի ընտրել այնպիսի թեմաներ, վորոնք սերտորեն կապված են դասախոսության հետ, որի-նակ, «Ինչպես յես կադմիցի պլանը», «Մենք ինչով ենք զբաղվում խմբիդ նիստերում»: Հասկանալի յի, դեկավարը լավ պիտի ճանաչի իր ունկնդիրներին, վորպեսզի ճիշտ բաշխի նրանց յեղույթները և վոր-

պեսզի ամենաուժեղներն ու փորձվածներն ոգնեն իրեն՝ ըստ հնարավորին լիովին կատարելու պարապ-մունքի պլանը:

Ղեկավարը յուրաքանչյուր թեմայի մասին լրա-ցուցիչ գրականություն պիտի կարդա: Այդ գրադա-նությունը նրան կոչնի ավելի վստահորեն տանել պարապմունքը, ավելի հետաքրքիր ձևով գնել հարցե-րը, ավելի լրիվ ու ճշտորեն պատասխանել հեռակա-յողների կողմից տրված հարցերին:

Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ ուղարկ-ված մեթոդական նամակում նշված էլինի համապա-տասխան գրականությունը:

ԿՈՆՍՈՒԼԵԱՅԻԱՆ ԱՆՅԱՅՆԵԼՈՒ ՄԵԹՈԴԵ

Կոնսուլտացիան աշխույժ զրույց է: Յուրաքան-չյուր կոնսուլտացիայի պլանը՝ վորոշում է հենց այն դասախոսությունը, վոր ուղարկվում է կոնսուլտան-տին: Նրա համար լրացուցիչ նյութ են հանդիսանում ունկնդիրների պատի թերթերը:

Օրագրում նախատեսված բոլոր դասախոսու-թյունները լայն հնարավորություններ են տալիս, վոր ունկնդիրները հետաքրքիր բաներ պատմեն: Ահա, որինակ, «Մեք լուի աշխատանքը» դասախոսությունը: Յնթե հեռակայողներին ուղղակի հարց տրվի, թե նրանցից յուրաքանչյուրն ինչպես է հասկացել կար-դացածը, այդ նրանց մեջ մեծ հետաքրքրություն էի առաջացնի: Բոլորովին այլ պատկեր կստացվի, յնթե

այս ու. այն խմբագրին առաջարկվի պատմել, թե նա ինչպես է կազմակերպել խմբկողի աշխատանքը: Պետք է այնպես անել, վոր յուրաքանչյուր յեւույթ ունեցող իր աշխատանքի գնահատականը տա այն ցուցումների տեսանկյունով, վոր տրված են դասախոսութեան մէջ:

Շատ կարեւոր է պատի թերթի խմբագրին վարժեցնել, վոր նա քննադատաբար վերլուծի ինչպես իր, այնպես էլ ուրիշ խմբագրիւնների պատի թերթերը: Դրա համար էլ պարապմունքների ժամանակ հեռակայողներին լայնորեն մասնակից պիտի անել իրենց հրապարակած թերթերի քննարկմանը, ի հարկէ, դասախոսութեան հիմնական բովանդակութեան համապատասխան:

Յերբ արդեն մի քանի հեռակայող մի վորոշ հարցի մասին արտահայտվել են, ղեկավարը ամփոփումներ է անում և համառոտակի ձեակերպում յեղբակացութեանը:

Ղեկավարի յեղբակացութեանը պետք է ընդհանրացնի ունկնդիրների ասածները: Այդ յուրաքանչյուր կոնսուլտացիայի պատասխանատու մոմէնտն է: Այդ յեղբակացութեանը հեռակայողների հիշողութեան մեջ պիտի տպւոյնքի ամենազլխավոր գրույթները: Կոնսուլտացիայի ընթացքում խոսքն ինչպիսի կոնկրետ գործերի էլ վերաբերի, պետք է այնպես անել, վոր հեռակայողները յուրացնեն բոլշեիկյան մամուլի աշխատանքի հիմնական սկզբունքները:

Կոնսուլտացիայի վերջում պետք է համառոտակի պատմել հետեյալ պարապմունքի թեմայի մասին:

Նայած թեմայի բնույթին, շրջանի առանձնահատկութեաններին, ունկնդիրների պատրաստութեան մակարդակին՝ այս կամ այն պարապմունքի մեթոդն էլ կարող է փոփոխվել: Տեղի պայմանները ղեկավարին կթելադրեն, թե հարկավոր է արդյոք, որինակ, «Աշխատանքը գյուղթղթակիցների մեջ» և «Գյուղթղթակիցների պաշտպանութեանը հալածանքից» թեմաների պարապմունքների ժամանակ հրավիրել շըրջանային դատախազին (վորպեսզի նա ինֆորմացիա տա, թե շրջանային դատախազութեան ինչպես է պաշարում թղթակիցներին հալածելու դեմ): «Կոնսուլտացիան ղեկավարութեանը մամուլին» նյութի վերաբերյալ պարապմունքի ժամանակ կարելի չի հրավիրել մի քանի կոլտնտեսութեանների կուսակազմակերպիչներին և խնդրել, վոր նրանք պատմեն, թե նրանք ինչպես են ղեկավարում պատի թերթերը:

Ինքը՝ կյանքը պարապմունքի շատ հետաքրքիր ձևեր և առաջադրում:

Կոնսուլտանտ Կարլոզերը (Դնիպրոպետրովսկի մարզի Բ. Տոկմակյան շրջան) գրում է. — «Ձմեռը հին գյուղում և ձմեռը կոլտնտեսութեանում թեման ուսումնասիրելիս մենք հրավիրեցինք ինսուտն տարեկան մի ծերունու, վորը պատմեց, թե առաջ ինքն ինչ էր անում ձմեռը, ինչպես էյին ապրում գյուղում, ինչով էյին զբաղվում ձմեռիս յերկար գիշերները: Կոնսուլտացիոն կետերում լույս ընծայեցինք պատի թերթի հատուկ համար, վորի մեջ տեղավորեցինք հեռակայողների հավաքած Ժողովրդական ստեղծագործ-

ծությունները, նկարներ ֆերմայի աշխատանքներից-
խրճիթ-ընթերցարանների, լավագույն ստախանովա-
կանների աշխատանքից, հետաքրքիր տեղեկություն-
ներ հավաքեցինք կոլտնտեսությունների կյանքից-
թե ինչ են անում զանազան խմբակները, ինչ
պիես ե բեմադրելու գրամխմբակը: Այդ նույն խմբա-
կում կոլտնտեսային նկարիչ ինքնուս Վանյա Սի-
րենկոն պատմեց, թե ինքն իչնպես ե նկարել իր
«Ձմեռը կոլտնտեսությունում» նկարը: Տեղափոխեցինք
այդ նկարի լուսանկարը, տեղեկություններ հավաքե-
ցինք «պատահարներ» բաժնի համար, մի խոսքով՝
պատրաստեցինք այնպիսի թերթ, ինչպես սովորեց-
նում ե գաստխոսությունը: Այնքան շատ հետաքրքիր
նյութ հավաքվեց, վոր, հակառակ մեր ցանկությանը,
չկարողացանք բոլորն ել ոգտագործել թերթում: Հե-
ռակայողները համոզվեցին, վոր ձմեռը ես ամառվա
նման կարելի յե շատ հետաքրքիր թերթ պատրաստել»

Նույն թեման ուսումնասիրելիս ընկեր Կալուգե-
րը հեռակայողների եքսկուրսիա կազմակերպեց զեպի
անասնապահական ֆերման: Անասնաբուծն ու ստա-
խանավականները խմբավորներին շատ հետաքրքիր ու
սղտակար բաներ պատմեցին անասնապահության հա-
ջողությունների մասին: Ֆերմայի աշխատակիցների
հետ զրույցելիս հեռակայողները մի անգամ ես համոզ-
վեցին, վոր անասնապահական ֆերման պատի թերթի
համար հետաքրքիր թեմաների մի անսպաս աղ-
բյուր ե:

Կոնսուլտանտ Պոչտարյովը գործնականապես ցույց
տվեց հեռակայողներին, թե ինչպես պիտի ընթերցող-
ների ժողովներ կազմակերպել: Վասիլևսկ դոկտորում 283
կոլտնտեսական հավաքվեցին: Նրանք քննության
առան պատի թերթի աշխատանքն ու պլանը
ե շատ գործնական առաջարկություններ արին:
Շատ շրջանային թերթեր ուսուցման կապակցությամբ
թղթակիցների արշավներ են կազմակերպել՝ ստուգելու
կոլտնտեսությունների պատրաստությունը ցանքին,
ե այլն:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԵՌԱԿԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԲԸ

Յուրաքանչյուր դասախոսությունը նախատե-
սում ե, վոր ունենդիրները վորոշ գործնական աշխա-
տանք կատարեն: Ղեկավարն իր համար կանոն պիտի
դարձնի, վոր վոչ մի գործնական աշխատանք առանց
ստուգման չթողնի:

Գործնական պարապմունքներն ամեն կերպ պի-
տի բաղմապիսի դարձնել: Չի կարելի գործնական
պարապմունքը միմիայն պատի թերթեր լույս ընծա-
յելը դարձնել: Ոգտակար կլինի հեռակայողներին
հանձնարարել նաե ուրիշ առաջադրություններ, որի-
նակ, մտածել, թե ինչ պիտի գրել տվյալ նկարի
տակ, ընտրել հաջող ծաղրանկար, հետազոտության
համար հարցադուցակ կազմել, թերթի համարի պլան
պատրաստել ե այլն: Չպետք ե խորշել նաե այնպի-

սի, առաջին հայացքից «մանրուք» թվացող խնդիրներին, ինչպիսիք են, որինակ, հեռակայողին սովորեցնել արտագրել, քանոն ու մատիտ գործածել, թերթի համար հաջող ծաղրանկար ընտրել, հարմար քաղվածք ջոկել և այլն:

Գործնական աշխատանքների հիմնական մասը պիտի տալ, վոր հեռակայողները տանը կատարեն: Բայց, յեթե հնարավոր և կոնսուլտացիան յերկու-յեքեք ժամից ավելի շարունակել, այդ դեպքում շատ ոգտակար կլինի, վոր հեռակայողները վորոշ գործնական աշխատանքներ կատարեն հենց կոնսուլտանտի ներկայությամբ: Հասկանալի չե, վոր զրույցն ու գործնական աշխատանքը պետք և սերտորեն կապված լինեն իրար հետ:

Գործնական աշխատանքի առաջադրություններին մասին ևս կոնսուլտանտը նախորոք պետք է լավ մտածի: Իրա համար պետք է ընտրել կոնկրետ ու հրատապ նյութեր, վորոնք ըզիսեն այն խնդիրներին, վորոնց կատարման համար պետք է պաշարի տվյալ կրթնտեսության պատի թերթը:

Համեմատաբար ավելի լավ պատրաստված հեռակայողներին կարելի չե գործնական աշխատանք տալ շրջանային թերթում: Անցյալ տարի այսպիսի աշխատանքի շնորհիվ շատ հեռակայող գյուղթղթակիցներ առաջ քաղվեցին թերթի խմբադրությունում աշխատելու:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԵՐԹԸ ՅԵՎ ԿԵՌԱՎԱ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Շատ շրջանային թերթեր իրենց եջերում պարբերաբար լուսարանում եյին հեռակա ուսուցման ընթացքը, վորով վորոշ հասարակական կարծիք եյին ստեղծում ուսուցման շուրջը, բարձրացնում եյին հեռակայողների պատասխանատվության զգացմունքը: Այդ լավ է: Սակայն պետք է նշել, վոր հեռակա ուսուցման մասին շատ թերթեր բոլորովին միակողմանի նյութեր եյին տպում: Տպում եյին մեծ մասամբ կամ հեռակայողների պարտավորությունը, թե կսովորեն «լավ» ու «ղերադանց», կամ նրանց կարծիքները պարապմունքների մասին:

Ի հարկե, վորոշ չափով հարկավոր է այդպիսի նյութ ևս տպել: Սակայն շրջանային թերթը շատ ավելին կարող է անել և միայն այդպիսի թղթակցություններով սահմանափակվելը ճիշտ չի լինի: Շատ շրջանային թերթեր համարյա յերեք մամուլի տեսություն չեն տպում պատի թերթերի մասին: Մեր նայած 100 կոմպլեկտ շրջանային թերթերից միայն 20-ի մեջ կային մամուլի տեսություններ, մինչդեռ այդ, ինչպես հայտնի չե, ստորին մամուլը զեկավարելու փորձված ձե է:

Մամուլի տեսությունները խիստ անհրաժեշտ են նաև խմբագիրների հեռակա ուսուցման շահերի տեսակետից: Կոնսուլտացիաներից վոչ բոլոր պատի թերթերի խմբագիրներն են կարողանում ոգտվել:

բայց մամուլի տեսութիւնը բոլորն են կարդում: Կարդում են վոչ միայն պատի թերթերի խմբագիրները, այլև կոլտնտեսութեան կուսկազմակերպիչն ու նախագահը: Կարդում են և՛ գյուղթղթակիցը, և՛ շարքային կոլտնտեսականը, վորի համար հետաքրքիր է իմանալ շրջանային թերթի կարծիքն իրենց կամ հաւան կոլտնտեսութեան պատի թերթի մասին:

Մամուլի տեսութիւններում պետք է համեմատաբար ձևով քննել պատի թերթերի թերութիւնները և մասսայականացնել հաջողված փորձը. մի խոսքով՝ յուրաքանչյուր տեսութիւնն այնպես պիտի կազմել, վոր նա սովորեցնի խմբագիրին: Տեսութիւնների թեմաներն ու նրանց պարբերականութիւնը կարելի չէ հիանալի կերպով համապատասխանեցնել կոնսուլտացիաներին: Որինակ, յետեւ «Թղթակցութեան գործունեութիւնը» նյութին նվիրված կոնսուլտացիայից առաջ շրջանային թերթը մի մանրամասն տեսութիւն տպի այդ նյութի մասին, ապա կոնսուլտացիան կանցնի իր անհրաժեշտ բարձրութեամբ:

Պետք է ամփոփանքով ասել և այն, վոր շրջանային թերթերը պատի թերթերից վերցրած հետաքրքիր նյութեր չեն արտադրում: Մինչդեռ պատի թերթերից արտադրած թղթակցութիւնները կարող են լին մի հետաքրքիր բաժին կազմել շրջանային թերթում: Շատովյան շրջանի «Նովի պուտ» թերթն իր հոկտեմբերյան համարում մի ամբողջ էջ է հատկացրել այդպիսի թղթակցութիւններին, վորոնք տպել են «Նոր կյանք» ընդհանուր վերնագրի տակ: Տեղավորե-

լով այդ հետաքրքրական «նյութերը» դրանով իսկ թերթը խրախուսում է պատի թերթերի խմբագիրներին, նրանց դրդում է նորանոր թեմաներ վորոնք:

Թե հեռակայողները վորքան են յուրացրել հեթեհան դասախոսութիւնը, այդ բանը զեկաւարը հեշտութեամբ կարող է պարզել կոնսուլտացիայի ընթացքում և հեռակայողները կատարած գրանցումները պարբերաբար նայելով: Սակայն առաջագիմութեան գնահատականի հիմնական նյութը պետք է լինի հեռակայողի լույս ընծայած պատի թերթը, նրա գրած թղթակցութիւնը: Ամեն մի կոնսուլտացիայի վերջում կոնսուլտանտը պետք է նշի յուրաքանչյուր հեռակայողի աշխատանքի վորտէն առանձին:

Հեռակայողներին պետք է նախադուշացնել, վոր մամուլի որվա առթիվ (1937 թ. մայիսի 5) նրանք պետք է քննութիւն տան անցած թեմաներից:

Ըստ ելութեան այդ կլինի պատի թերթի խմբագրի հաշվետվութիւնը կոլտնտեսականներին՝ այն մասին, թե ինքն ինչպես է սովորել, ինչպես է կարողացել ստացած գիտելիքներն ոգտագործել թերթի խմբագրման գործում:

Այդ առթիվ հատուկ նամակ կուղարկի այդ ստուգումները կատարելու կարգի մասին:

Կոնսուլտանտը հեռակայողների հետ ունեցած իր առաջին զրույցում պետք է ոգտագործի այս մեթոդական նամակի նյութը, վորպեսզի հեռակայողներ-

րին պատմի, թե ինչպես և կազմակերպվելու ուսու-
ցումը, պատմի դասախոսությունների թեմաների մա-
սին, պարապմունքների մեթոդի, գործնական առա-
ջադրությունների և ավարտական ստուգումների
մասին:



Գյուղերատի տպարան, Յերևան.

Գրապլան № 2251,

պատվեր 103,

տիրաժ 200

«Ազգային գրադարան»



NL0139182

27

14790

804

1.
2

ЗАОЧНЫЕ КУРСЫ

редакторов колхозных
и бригадных стенгазет

МЕТОДИЧЕСКОЕ ПИСЬМО

Редактору районной газеты
по курсу

«Практика газетной работы»

Составил Б. М. ЛЕЙБЗОН

Издание ЦК КП(б) А «Хорурдани Айастан»
Ереван—1937 г.